

Ե. Ֆրանգեանց

ըր միշտ երգում է եկեղեցիներում: Պէտք էր սպասել, որ հասարակութիւնը՝ չորսիւ քաղ- ցրածայն երգեցողութեան՝ կը սկսէր կանօնա- ւոր յաճախել եկեղեցի, սակայն այս փորձն էլ իզուր է անցնում: Մեր հասարակութիւնը առաջ մեծ ուշադրութեամբ էր վերաբերւում այդ եր- գեցողութեան, բազմութեամբ յաճախում էր եկեղեցի, սակայն շուտով պատուելի սքանչե- ցինքը ձանձրացան երգեցողութիւնից: Այժմ առաջվայ պէս եկեղեցի յաճախում է զխաւո- րապէս իրական տարրը, իսկ տղամարդիկ կամ գինեւաններու Բազումն են փառաբանում, կամ թուղթ խաղում կամ զբաղված են իրանց անձնական գործերով...

«Մշակի» 109 համարում տպւած էր մեր նամակը, որով մենք բողոքում էինք Սուրամի երէցփոխ Աստուածատուր Յակոբեանի վերընտ- րութեան գէտ: Պէտք էր կարծել, որ թիֆլիսի հայոց կոնսիստորիան, որի կոչումն է պաշտպա- նել եկեղեցական շահերը, ուշադրութեան կառ- նէր այդ բողոքը եւ գտնէ ընտելութիւն կը նշա- նակէր, քանի որ թէ երէցփոխ Յակոբեան եւ թէ գործակալ Արիւսեան քահանան լուու- թեամբ մարտնչին այդ քանգատը: Բողոքը մնաց «ճայն բարբառող յանապատի» եւ սան- ձարձակ երէցփոխը շարունակում է իր պաշ- տօնը: Երէցփոխի վերահաստատութեան մասին ոչ մի լուր չը կայ: Միթէ յիշուի հոգեւոր իշ- խանութիւնը կամենում է, որ մի գործակալ իր ազգական երէցփոխի հետ մնասի եկեղեցի եկեղեցի: Սուրամի մեռած եւ անտարբեր հա- սարակութեան մէջ յայտնվել են մի քանի ան- ձինք, որոնք կամենում են բողոքել այս մա- սին կոնսիստորիային: Պէտք է յուսար, որ այս անգամ հոգեւոր իշխանութիւնը խստութեամբ կը վերաբերվի գործին եւ ասպարէզից կը հե- ուայնէ անչորհք երէցփոխին:

Յ. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կաղզուան, նոյեմբերի 23-ին
Ընթերցող հասարակութեանը արդէն յայտնի է այն վէճը, որ ծագել է Կաղզուանի հասա- րակութեան ու տեղիկ աղանաքի կապալաւու Զաքար աղա Զանփորաղեանի մէջ եկեղեցու չիտովեան առիթով: Վէճը այն աստիճան սուր կերպարանք ստացաւ, որ թիֆլիսից քանիչ նշանակվեց Երեւանի փոխ-թեմակալ Սուքիաս աբեպիականոսը: Թէ որ աստիճանի «անապատ» ընտելութիւն կատարեց նա, ինչ զիրք բռնեց զէպի հասարակութիւնը, այդ մասը ամենայնից կը յայտնվի «Մշակի» միջոցով հասարակու- թեան: Իսկ երկուողովս եւ կամենում եւ մաս- նաւորապէս ինձ հետ տեղի ունեցած ընդհա- րուով ընտրուել քանիչ եպիսկոպոսի անձնաւո- րութիւնը եւ նրա կատարած քննութեան եղա- նակը:

Եկեղեցու մէջ գումարված բազմամարդ ժո- րովում քննիչ արքեպիսկոպոսը առանց որ եւ է հիւսել ունենալու թող տուեց իրան սակ իմ հասցէին. «բժ. Կանկանեան, երբ գործը հա- սաւ ստորագրութեան (փողի), եկեղեցուց դուրս եկաւ»: Եւ ընդհանրից Պարզեանի խօսքը, ա- սելով, որ եւ դուրս եկալ եկեղեցուց ոչ թէ ստորագրութիւնից խոյս տալով, այլ չը կարո- ղանալով ստանալու լսել այն ակնյայտի ստեղծ, որ յայտնում էին եկեղեցու, սուրբ օնդանի առաջ, Զաքար աղայի արքեպիսկոպոսը, ջանալով հաւատացնել, թէ աղան հասարակու- թեան հասցին չէ թըր իսկ թէ եւ անհա- սարակ ստորագրութիւններից փախչող չեմ, արան վկայ են իմ տաճարմայ համեստ գոր- ծունէութիւնս Կաղզուանում, իմ անցեալ եւ ներկայ վիճակս: Այս խօսքերիս զատաւոր հրաւիրելով ներկայ գտնվող հասարակութիւնը, — եւ դուրս եկալ եկեղեցուց:

Չափազանց յուզված Սուքիաս արքեպիսկո- պոսի անսակով վարժունքից, եւ ման էի գալիս փողոցում, երբ տեսայ, որ արքազանը, գոյնը հզած, փիլիսոփայ ուստի շտապով գալիս է ե- կեղեցու կողմից: Երբ մտնեցա ինձ, ինքը առաջինը զիմեց ինձ ասելով «Դուք հի- ւանդ էք, բժիշկ, որին եւ ստիպված եղալ պատասխանել թէ հիւանդ չեմ եւ չեմ թող տայ, որ պատիւս չօչափեն: Այս խօսքերիս արեա- ղանը արդէն հրապարակի վրա, բազմութեան առաջ կատարած արտասանեց. «Դուք ճԵՄ- ԿՈՒՍԿԵՆՔ, ճԵՄԿՈՒՍԿԵՆՔ»: Յարգելով նրա բարձր կոչումը եւ զսպեցի զայրոյթս, մի խօսք շարտադանով, ասելի բարեւոյ զատելով մի այլ տեղ խօսել նրա հետ:

Սուքիաս արքեպիսկոպոսի ճշգրիտ պատկերը ներկայացնելու համար, նրա քաղաքավարու- թեան եւ վարչական տակտի աստիճանը ասելի են ընտրուելու, ասելով չեմ համարում յիշել այստեղ հետեւեալը. — ութնունական թեմական- ների վերջերում Սուքիաս եպիսկոպոսը Աստ- ռախանի թեմի տաճարից էր եւ եւ Ղզարի հոգեւոր երկսեռ զպրոցների հոգաբարձու: Այն ժամանակ էլ Սուքիաս արքեպիսկոպոսը իր անդուլակ ընտելութիւնը արտայայտում էր պաշտօնական թղթերի մէջ երէցփոխին «պըն- ղաղուխ» անուանելով: Յիշում եմ, որ զպրոցի հոգաբարձութիւնը, չը կարողանալով տանել

պաշտօնական թղթերի մէջ իրան ուղղած վի- րաւորանքները, ժողով գումարեց, ուր ներկայ էր եպիսկոպոսի ուղարկած՝ Աստրախանի Յով- սէփ աւագ քահանայ Բունիաթիան: Զայրոյթն այն աստիճանի էր, որ զեկուցանող հոգաբար- ձուն այս խօսքերով ընտրուեց արքազանի բըռ- նած գիրքը «Հարկաւոր է վերջապէս սանձա- հարկ առաջնորդի անգուստ ձգտումները»: — Այս խօսքերից յետոյ քահանան վերկայաւ եւ ասելով՝ «պ. նախագահ, որովհետեւ այստեղ իմ իշխանաւորիս կամենում եւ սանձել, ուստի եւ հետանում եմ ժողովից» — եւ դուրս գնաց:

Բժ. Գ. Կանկանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարի հետ մենք ուղար- կում ենք պատալին փոխանակագրի բանակ- ներ, որոնցով 1901 թ-ի «Մշակին» ստորագրվել յանկայողները կարող են ուղարկել մեզ փողը եւ յայտնել իրանց հասցէները: Այդ բանակների վրա պէտք է կայնել 15 կոպէկանոց մարկա:

Բժ. Կապետ Յ. Գաւաթարեանց ուղարկել է մեր խմբագրութեան 25 բուրի յօդուտ չբաւոր ուսանողներին:

Բազուի մեր նոր բաժանորդներից մէկի հաա- ցին պատահար կորցրել ենք: Ծրարը ու- ղարկված է Բազուից նոյեմբերի 18-ին № 1777 անգորրագրով: Խնդրում ենք այդ բաժանորդից ներկայիս կրել նորից յայտնելու իր հասցէն մեր խմբագրութեանը:

Ներքին գործերի մինիստրութեանը ներկա- յայրած է մի կանօնագրութիւն, որով պէտք է հոգաբարձութիւն կազմվի՝ Պետերբուրգում ապրող կովկասցիների կարիքները հոգալու նը- պատակով: Հոգաբարձութիւնը պէտք է զանա- զանակերով օգնութիւն հասցնէ չբաւոր կով- կասցիներին, տալով նրանց փոխաւորութիւն- ներ եւ օժանդակութիւններ: Հոգաբարձու- թեան գործունէութիւնը սկսվելու է առա- ջիկայ նոր տարուց յետոյ:

Ռուսաց ս. սինօդը նորից բացատրել է, որ ռուս ծխախոտ քահանաները չը պէտք է թող տան, որ իրանց ծխերի մէջ զանազան գաղ- թականներ թիրքայից եւ Պարսկաստանից նուիրատուութիւններ հաւաքեն, եթէ հաւա- քողները չեն ունենայ առանձին թղթուութիւն սինօդի կողմից:

Պետերբուրգի գեղարուեստական ակադե- միայի փոխ-նախագահ Կոմս Ի. Տօլստոյի նա- խաձեռնութեամբ, ինչպէս հաղորդում է «KAB- EABE» լրագիրը, հարց է բարձրացրած գեղա- րուեստական միջնակարգ դպրոց հիմնելու թիֆլիսում: Որովհետեւ այդ մտադրութիւնը իրագործվում համար ամենից առաջ հարկաւոր է պարզել հիմնվելը դպրոցի պահպանութեան հարցը, ուստի թիֆլիսի պ. նախագահաւոր զի- մել է քաղաքային վարչութեան, ինչդրելով հա- ղորդել իրան, թէ ինչ մասնակցութիւն կարող է ունենալ քաղաքը դպրոցի համար նիւթական միջոցներ հալթայթելու հարցում:

Նոյեմբերի 26-ին լրացաւ Կայսերական գի- տութիւնների ակադէմիայի պատաւոր ան- դամ եւ Պետերբուրգի համալսարանի պրօֆե- սոր Անդրէյ Նիկոլայիչ Բէկէտովի մահակաւը- ժական եւ գիտական-գրականական գործու- նէութեան յիշատակը: Պրօֆեսոր Բէկէտով կէս դար առաջ Կազանի համալսարանում աւարտելով իր ուսման ընթացքը եւ ստանալով ֆիզիկո-մա- թեմատիկական գիտութիւնների կանգնողատի կո- չումը, եկաւ թիֆլիս գիմնազիայի ընդգիտու- թեան եւ ֆիզիկայի ուսուցչի պաշտօնով: 1853 թ-ին Բէկէտով Պետերբուրգի համալսարանում պաշտպանեց սոպիստորի դիսէրտացիա, իսկ 1858 թ-ին մագիստր րուսաբանութեան դոկ- տորի աստիճան: 1859 թ-ին Բէկէտով նշանակ- վեց Սարկովի համալսարանի պրօֆեսոր, իսկ 1860 թ-ականից, ահա 40 տարի արդէն բու- սաբանութեան ամբիօնն ունի գրաւած Պետեր- բուրգի համալսարանում: Գիտական շատ ըն- կերութիւններ Բէկէտովին ընտրեցին իրանց պատաւոր անդամ:

Եկող տարի ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մտադրութիւն ունի խնդրել 35 1/2 միլիոն բուրլի ժողովրդական կրթութեան կարիքների համար: Մէկ միլիոն բուրլուց ա- ւելի նպաստներ են սպասվում քաղաքներից,

զէմստիօններից էլ սպասվում է նոյնքան գու- մար: Հասարակական եւ դասակարգային տուր- բերից ու այլ յատուկ աղբիւրներից — երկու միլիոնից աւելի: Այդպիսով ժողովրդական կրթ- թութեան համար ծախսի գումարը կը հասնի 40 միլիոն բուրլու:

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ հետագրում են նոյեմբերի 26-ից: «Այսօր հոգեհանգիստ կատարելով, ող- բում ենք մեր նախկին սիրեցեալ իշխանաւոր Խորէն եպիսկոպոս Ստեփանէի ծանր կորուս- տը: Մեր շարքից չքայաւ մէկը արժանա- ւոր, լուսաւոր եւ անկաշառ հովուապետներից, որ հայ եկեղեցու պարծանքն էր եւ հայ հոգե- ւորականութեան փառքը: Իր տաղանդաւոր, վառող քարոզներով նա լուսաւորում էր մեր ճանապարհը դէպի լոյսը եւ ճշմարտութիւնը: Աստրախանի հայ հոգեւորականութիւնը:

ԴԵՐԲԷՆՏԻՑ ստացանք հետեւեալ բաղմա- ստորագրի հետագիրը նոյեմբերի 27-ից: «Ողբում ենք հոգեւորական հետաւոր եւ իր ազգին ան- կեղծօրէն նուիրված Խորէն եպիսկոպոս Ստեփանէի մահը: Երէկ հոգեհանգիստ կատար- վեց եկեղեցում:

ՀԱՐԱՍՈՒԹԱԶԱՐԻՑ մեզ գրում են. «Նոյեմ- բերի 21-ին, Աստուածածնի ընծայման օրը, պատարագից յետոյ, տեղիս Յովհաննէս ա. քա- հանայ Սարգիսան հոգեհանգիստ կատարեց հան- գուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի յիշա- տակին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Թիւրքաց լրագիրները հաղորդում են, որ անգլիական զինւորական գործակալ գնդապետ Պօնսօնի շուտով Կ. Պօլսից ճանապարհ կրնի- նի դէպի Հայաստան: Նա կը չըջալցանէ Երզ- րումի, Բիթլիսի եւ Վանի վերջանքներում:

— Պարսից լրագիրները հաղորդում են Բեր- լինի լրագիրներին, թէ Քրանսիական կառա- վարութիւնը զիմել է չլէյքարական զանալի- ցական խորհրդին եւ առաջարկել, որ Շվեյցա- րիան, հիմնվելով Հաւաքայի կոնֆերենցիայում ընդունված որոշումների վրա, առաջարկէ Անգ- լիային եւ բօսնական հանրապետութիւններին իր միջնորդութիւնը: Երկու պետութիւններ, որոնք չը կարողանան անձամբ միջնորդ հան- դիստալ հարաւ-աֆրիկական ընդհարման հար- ցում, պատրաստ են, այդ լուրերին նայելով, միանալ մի կողմից պետութեան միջնորդու- թեանը:

— Նախկին մինիստր եւ պատգամաւոր Ժիւլ Բօշ գրել է «Revue des Revues» ամսագրում մի յօդուած Քրանսիական պետական բիւջետի մասին, որի մէջ խաղաղութիւն է, թէ այս դա- րի ընթացքում Քրանսիական բիւջետը հնգա- պատկով է. 1801 թ-ին նա հաւասար էր 836 միլիոնի, այն ինչ 1901 թ-ին նա կը հասնի 4,030 միլիոնի: Նախկին մինիստրը մասնագիտց է անում այն յուզիչ հանգամանքը, որ բիւջե- տի չափազանց աճումը առանձնապէս աչքի է ընկնում վերջին տասնամեակի ընթացքում: Եթէ գործերն այսպէս կը շարունակվեն եւ ապագայում — նկատուած է Բօշ — բանը կը վեր- ջանայ նրանով, որ Քրանսիան ստիպված կը լինի աշխատել միայն հիշէ — պետութեան հա- մար, որ ամեն ինչ ծծում ու կրանում է: Բայց այդ խնձոյքը կրկնապատու չի լինի, որովհե- տեւ եթէ մարդիկ հարկաւորված պէտք է լի- նեն իրանց ամբողջ աշխատանքը տալու հարկ հաւաքողին, այն ժամանակ նրանք այլ եւս չեն լարի իրանց ոյժերը եւ երկրի ամբողջ արդիւ- նաբերութիւնը կոչնչանայ: Պօլ Կասսանեակ, օգուտ քաղելով Բօշի առաջ բերած թուերից, «Autorité»-ում համեմատութիւն է դնում Քր- անսիական կայսրութեան եւ Քրանսիական հանրապետութեան մէջ: Նա յիշեցնում է, որ 1804 թ-ին Ֆրանսիան, որ 915 միլիոն բիւ- ջետ ունէր, կազմված էր 108 դեպարտամենտ- ներից, որոնց մէջ էին Բրեւսէլ, Գինտ, Ժը- նեվ, Անտվէրպէն, Մայն, Ալսազ եւ Կօլմար, իսկ Քրանսիական ժողովարանը զետեղված էին Բայօնում, Ամստերդամում, Բէլգիանում, Համ- բուրգում, Գինսբուրգում եւ Պերսիանում: Դեռ 1811 թ-ին, երբ առաջին կայսրութիւնը իր բարձրութեան գագաթնակէտի վրա էր գտն- վում, նրա բիւջետը 1,309 միլիոնից աւելի չէր: Նապոլեօնը, իր 15-ամեայ անընդհատ պետե- րազմների ժամանակ, մայրենի է 15,292 միլիոն, այն ինչ ներկայ հանրապետութիւնը, որ զբո- լված է նոյն իսկ երկաւ-Լօտարիդիայից, ծախ- սում է նոյն գումարը չորս տարուի:

— «Manchester Guardian» ասում է, թէ լորդ Բօրեթոս, Անգլիա վերադառնալուց յե- տոյ, կը ստանայ դքսի տիտղոս Բացի դրա- նից կառավարութիւնը կամենում է առաջար- կել պարլամենտին, որ հարաւ-աֆրիկական պատերազմի հերոսին 100,000 ֆ. ստերլինգ տրվի, որպէս պարգև:

— «Echo de Paris» լրագրի թղթակիցը խօ- սակցութիւն է ունեցել զօկտօր Լէյդիի հետ, որի ժամանակ Լէյդիս յայտնել է նրան, թէ

կրիզէր կը մնայ Հօլլանդիայում երկու շա- րաթ եւ շատ հաւանական է, որ այնտեղից դիմէ պետութիւններին մի չըջարբալիս յայ- տագրով եւ մի եւ նոյն ժամանակ հրատարա- կէ այն վաւերացիքները, որոնցով անուանակը- վում են Չեմբերլէն եւ ուրիշ անգլիական բարձրաստիճան պետական գործիչներ:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

29 նոյեմբերի

ԲԵՐԼԻՆ. Ինչպէս հաղորդում է գլխաւոր հրամանատարը Պեկինից, Չաֆֆի գրաւոր կեր- պով ցաւ յայտնեց իր նամակի առիթով այն- տեղի զիտարանի աստղաբաշխական գործիչնե- րի վերաբերմամբ. արանով այս միջնորդէր վերջացած է համարվում:

Պեկին. Այսօր տեղի ունեցաւ դիպլոմատիա- կան մարմնի նիստը՝ քննելու խաղաղութեան չինական գործակալների լիազօրութիւնների ստուգման հարցը: Շատ հաւանական է, որ չուտով քայլեր կանվեն վերջնական համաձայ- նութիւն կայացնելու խաղաղութեան սկզբնա- կան պայմանների վերաբերմամբ, այդ բանը մեծ թեթեւութիւն պատճառեց այն բոլոր մարդ- կանց, որոնք պարզ հասկանում են այն վտանգը, որ կարող էր առաջ գալ բանակցութիւնների աւելի եւս ձգձգվելուց:

ՀՕՆԿՕՆԳ. Կանտօնից ստացված մի հեռագիր հաղորդում է, թէ Շանգուի մօտ ծովահէները յարձակվեցին մի նաւակի վրա եւ յափշտակե- ցին 3,000 դոլար. Մովսէսիսթիւնը եւ յափշ- տակութիւնները սաստկանում են Գուանսիւով եւ Գուանչուներով ճանապարհորդելու շատ վը- տանգաւոր է. ըստ երեւոյթին լիւսանութիւն- ները անգոր են կարգը վերականգնելու:

ԿԱՊԵՏԱԴՏ. Բօրեթոս ճանապարհ ընկաւ դէպի Անգլիա:

ՆԻՒԻՐՈՒ. Պեկինից հաղորդում են, թէ ղեկավարների այսօրվայ նիստում, որ նուիրված էր այն հարցի քննութեան, թէ Լի-Պու-Չանգ եւ Ցին արդեօք բաւականաչափ լիազօ- րութիւն ունեն վարելու խաղաղութեան բա- նակցութիւնները, ղեկավարներից մի քանիսը յայտնեցին, թէ նրանք լիազօրութիւն ունեն բանակցութիւններ վարելու այդ երկու անձանց հետ, որպէս Չինաստանի ներկայացուցիչների հետ, միւսները, ի միջի այլոց են ղերմանակա- նը, յայտնեցին, թէ այդ մասին նրանք հրա- հաններ չեն ստացել դեռ եւս. այսուամենայ- նիւ բոլոր ղեկավարները որոշեցին, որ եթէ նրանք չը ստանան հակառակ հրահաններ, բանակցութիւններ սկսեն Լի-Պու-Չանգի եւ Ցինի հետ, հէնց որ անգլիական ղեկավար թղթուութիւն ստանայ միանալու ընդհանուր յայտագրին: Վաղիկընէ վճույ տալ գնեիրալ Գիւլիին 63,000 դոլար, իրեւ մասն, որ պէտք է հասնէր Անգլիային դէպի Պատիսֆու կա- տարած արշաւանքի համար: Գիւլի յանձնեց այդ գումարը բրիտանական ղեկավարին, որպէս նուիրատուութիւն յօդուտ այն չինացիների, ո- րոնք ձեռնվայ ընթացքում կարիք կունենան օգնութեան Լի-Պու-Չանգ այցելեց այսօր Չաֆֆին եւ ասաց նրան, որ թէպէտ նրա լիա- զօրութիւնները հեռագրական են, բայց եւ այն- պէս անպայման լիակատար են — Այսօր տեղի ունեցաւ քաղաքային ժամանակաւոր վարչու- թեան նիստը Պեկինում, որի մէջ Միացեալ- Նահանգների կողմից ներկայացուցիչ է կապի- տան Դօդգա, նշանակված են մի քանի յանձ- նաժողովներ, բայց նրանց մէջ չեն մտնում Քրանսիացիներ, որոնք պնդեցին այն բանի վրա, որ նրանց հակողութեան յանձնված քա- ղաքամար դուրս մնայ ընդհանուր վարչութիւ- նից: Չինական շատ բարձրաստիճան պաշտօ- նեաներ ջանկութիւն յայտնեցին օգնելու մաս- նաժողովներին: Թէպէտ այդ յանձնաժողովների անգլամեր բացառապէս նշանակված են օֆի- ցերներ, այսուամենայնիւ գնեիրալները ջան- կանում են, որ վարչութիւնը լինի հնար եղա- ձին չափ քաղաքացիական:

ԼՕՆԴՕՆ. Համայնքների ժողովի Երկարատու- քննադատութիւնից յետոյ պատգաւածական լը- բացուցիչ բիւջետն ընդունված է:

ՀԱՍԳԱ. Այն խօսակցութեան մէջ, որ տեղի է ունեցել Կրիզէրի, Լէյդիի, մինիստր-նախա- ղահ Գիւրսօնի եւ արտաքին գործերի մինիստրի մէջ, Կրիզէրը կրկին անգամ չեւտեց, որ նրա ճանապարհորդութեան նպատակը միջնորդ դա- տարան է: Նիդերլանդական մինիստրները ա- սացին, թէ նիդերլանդական կառավարութիւնը պէտք է բաւականանայ այս հարցում չէզոք դիրքով եւ թէ նախաձեռնութիւնը պէտք է պատկանի մեծ պետութիւններին: Եթէ նրանք

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.